## Դաս 12. Կիրառական արվեստ

**Արենիի գինու հնձանը**

*Արենիի գինու հնձանը աշխարհի ամենահին գինու գործարանն է, որն ունի 6000-ամյա պատմություն: Դա ապացուցվում է ինչպես կառուցվածքային առանձնահատկություններով, այնպես էլ հնձանի հարևանությամբ հողի մեջ թաղված հսկայական կարասների և նրանց մեջ խաղողի կորիզների առկայությամբ: Հետաքրքիր է, որ այդ խաղողի կորիզները լիովին համապատասխանում են ներկայիս արենի փեսակի խաղողի կորիզներին: Արենիի գինու հնձանը վերահաստատեց, որ գինեգործության և խաղողագործության ակունքները Հայաստանում են:*